Կարգապահական գործ թիվ ԿԳ-21017

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի հունվարի 18-ի թիվ 2-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/01-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱՎԻՐ ՍԵՐԺԻԿԻ ԽԱԼԱՓՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանը և Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արշավիր Սերժիկի Խալափյանին **(արտոնագիր՝ թիվ 731)** (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ քաղաքացիներ Աննա Արմենի Հովհաննիսյանը և Հակոբ Արմենակի Օհանջանյանը **(այսուհետ նաև՝ Դիմողներ)**՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել են, որ դիմել են Փաստաբանին իրենց իրավաբանական օգնություն տրամադրելու համար: Վերջիններս Փաստաբանի հետ 08.12.2019թ. կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր և վճարել են 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Դիմողների պնդմամբ իրենք Փաստաբանին հայտնել են, որ ցանկանում են բանկին վճարումներ կատարել, որպեսզի չզրկվեն իրենց բնակարանից: Փաստաբանն իրենց հայտնել է, որ ամեն ինչ կարգին է, և ինքը բանակցում է բանկի հետ: Հետագայում Փաստաբանը խուսափել է իրենց ծառայություն մատուցել՝ պատճառաբանելով իր զբաղվածությունը համավարակով, պատերազմական գործողություններին և ցույցերին մասնակցելով:

2020 թվականի նոյեմբերին Դիմողների տուն է եկել ոստիկանը և տեղեկացրել, որ իրենք պետք է ազատեն այն, ինչից հետո Դիմողները կապվել են Արշավիր Խալափյանի հետ, որը եկել է իրենց տուն, կապվել բանկի հետ և տեղեկացրել, որ Դիմողները սնանկ են: Հետագայում Դիմողները Փաստաբանին զանգի միջոցով տեղեկացրել են, որ չեն ցանկանում սնանկ ճանաչվել: 2021 թվականի հուլիս ամսին Դիմողները ստացել են հարկադիր կատարողի որոշումը իրենց վտարման մասին, որի մասին տեղեկացրել են Փաստաբանին, սակայն Փաստաբանը պարզաբանումներ ներկայացնելու փոխարեն զարմացել է:

Դիմողները նշել են, որ Փաստաբանի անգործության արդյունքում իրենք զրկվել են իրենց գույքից և խնդրել են Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել է 2019 թվականի դեկտեմբերի 8-ի կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի պատճենը:

Դիմողը խնդրել է փաստաբաններին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2021 թվականի օգոստոսի 24-ի թիվ 179-Ա/ԿԳ-21017 որոշմամբ փաստաբան **Արշավիր Սերժիկի Խալափյանի** նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) **2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման հատկանիշներով:**

2021 թվականի օգոստոսի 26-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վերոնիկա Ալեքսանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողները բացատրություն չեն ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին դիմող Աննա Հովհաննիսյանը կրկին անդրադարձել Դիմումում նկարագրված հանգամանքներին: Մասնավորապես, հայտնել է, որ բազմիցս տեղեկացրել են փաստաբանին բնակարանի հետ կապված խնդրի մասին, ինչը հաշվի առնելով փաստաբանն առաջարկեց սնանկ ճանաչել իրենց: Նշվածը դիմող Աննա Հովհաննիսյանի պնդմամբ սխալ էր, քանի որ իրենց բնակարանը ձեռք էր բերվել հիպոտեկային վարկի շրջանակներում:

Դիմող Աննա Հովհաննիսյանը հայտնել է, որ մշտապես հետաքրքրվում էին փաստաբանից գործի ընթացքի մասին, սակայն իրենց հարցերին ի պատասխան փաստաբանը հայտնում էր, որ վարակվել է կորոնավիրուսային հիվանդությամբ, զբաղված է պատերազմական գործողություններով պայմանավորված կամ մասնակցում է քարոզարշավի:

Դիմող Աննա Հովհաննիսյանի պնդմամբ, Դիմողները չեն ստացել որևիցե արդյունք, քանի որ նշվածի պատճառով փաստաբանը չի կատարել պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, չնայած այն հանգամանքի, որ վերջինիս վճարվել էր պայմանագրով նախատեսված 400.000 ՀՀ դրամ գումարը՝ չհաշված մանր գումարները:

Դիմող Աննա Հովհաննիսյանը նաև հավելել է, որ իր և իր ամուսնու կողմից պահանջ էր ներկայացվել փաստաբանին կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնելու նպատակով:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբաններ Արշավիր Խալափյանին՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք)** 39.3 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցման հարցի քննարկման ընթացքում առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից բացատրություն չի ներկայացվել:

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը 2021 թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացրել է բացատրություն, որի համաձայն՝ Դիմողների կողմից 26.07.2021թ. իրենց հասցեագրված դիմումի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ առնվազն 2020թ.-ի COVID-19 կորոնավիրուսային համավարակը սկսվելուց հետո նրանք տեղյակ են եղել իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների մասին, սակայն Պալատ են դիմել միայն 29.07.2021թ.-ին: ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.08.2021թ.-ի թիվ 179-Ա/ԿԳ-21017 որոշման մեջ նշված է Աննա Հովհաննիսյանի և Հակոբ Օհանջանյանի դիմումի համառոտ բովանդակությունը, որից կողմնակի ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, որ չնայած այն հանգամանքին, որ Դիմողները իրեն վճարել են, սակայն նա իրենց ծառայություններ չի մատուցել, խուսափել ծառայություններ մատուցելուց,

անգործություն է ցուցաբերել, ծառայությունը մատուցելուց խուսափելը պատճառաբանելով է իր զբաղվածությամբ, համավարակով, պատերազմական գործողություններին կամ ցույցերին մասնակցելով, որի արդյունքում դիմողները զրկվել են իրենց գույքից:

Նշվածով պայմանավորված փաստաբանը հայտնել է, որ համաձայն 08.12.2019թ.-ին իր և Դիմողների միջև կնքված Փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի 1.1-ին կետի՝ փաստաբանը որպես կատարող պարտավոր է ծանոթանալ Դիմողների գործին, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, տեղեկություններ ձեռք բերելու նպատակով կազմել և հասցեատերերին ուղարկել գրություններ, անհրաժեշտության դեպքում Դիմողներին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումներ ներկայացնել դատարան, իսկ Դիմողները պարտավորվում են վճարել նշված ծառայությունների դիմաց մինչև 31.12.2021թ.-ը:

Բացատրությամբ Փաստաբանը հայտնել է նաև 26.07.2021թ.-ի Դիմողների կողմից ստացել է իրեն հասցեագրված դիմումը, որի բովանդակությանը ծանոթանալուց հետո պատվիրված նամակով պատասխան գրություն է ուղարկել Դիմողներին՝ պատասխան գրությանը կցելով փաստաթղթեր:

26.07.2021թ.-ին Դիմողներից ստացել է իրեն հասցեագրված դիմումը, որով դադարեցվել են Դիմողների կողմից Փաստաբանին տրված լիազորությունները:

Վերը նշված պայմանագրերը կնքելուն հաջորդող ժամանակահատվածում Փաստաբանը նշել է, որ ծանոթացել է Դիմողների գործերին, ուսումնասիրել վերջիններիս գործերին վերաբերվող փաստաթղթերը, ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ըստ անհրաժեշտության իրավաբանական խորհրդատվություն տրամադրել, լրացուցիչ փաստաթղթեր է ձեռք բերել, Դիմողների հետ քննարկել է նրանց սնանկ ճանաչելու պահանջի մասին ՀՀ սնանկության դատարան ներկայացվող դիմումների հարցը, ինչպես նաև Դիմողներին սնանկ ճանաչելու մասին դիմումներ է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան:

Փաստաբանը նշել է նաև, որ 2021թ.-ի հունվար ամսին «Արդշինբանկ» ՓԲԲ-ի պահանջով Դիմողները պարտադրված էին ազատել ք. Կապան, Հալիձորի 18/2 հասցեում գտնվող բնակարանը, սակայն դա տեղի չի ունեցել, քանի որ ոստիկանության Կապանի բաժնի աշխատակիցների և «Արդշինբանկ» ՓԲԲ-ի աշխատակիցների հետ և գրավոր, և բանավոր կարգով բանակցություններ են, վարվել, ինչի արդյունքում առնվազն 17.01.2021թ.-ի հունիս ամսվա վերջը Դիմողները ժամանակ են ունեցել ք. Կապան, Հալիձորի 18/8 հասցեում գտնվող բնակարանի հետգնման գործընթացի սկսելու: Փաստաբանի նաև նշել է, որ ինքը որևիցե մեղավորություն չունի, որ նշվածը գործընթացը Դիմողներին չի հաջողվել:

17.01.2021թ.-ին, որպես Դիմողների փաստաբան, նրանց խնդրանքով այցելել է,

ք. Կապան, Հալիձորի 18/8 հասցեում գտնվող բնակարան և բնակարանում գտնվող ոստիկանության մայոր Ն.Անտոնյանի հետ տեղում ու «Արդշինբանկ» ՓԲԲ-ի աշխատակիցների հետ արդեն հեռախոսով ունեցող բանակցությունների արդյունքում հասել է նրան, որ Դիմողներին բնակարանից չեն վտարել և ժամանակ են տրամադրել խնդրին լուծում տալու համար: Ըստ Փաստաբանի տվյալ պարագայում ինքը հանդես է եկել, որպես Դիմողների Փաստաբան, նրանց կողմից լիազորած անձ չնայած այն հանգամանքներին, որ նման ծառայություններ մատուցելու պայմանագրային պարտավորություններ չի ունեցել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2021 թվականի հոկտեմբերի 25-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Վերոնիկա Ալեքսանյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

2021 թվականի հոկտեմբերի 27-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2022 թվականի հունվարի 18-ի ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զանքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Դիմողներ և Փաստաբանի միջև 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման թվով՝ 2 պայմանագրեր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողների և Փաստաբանի միջև կնքված պայմանագրերի պատճեներով:*

2) Փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի 1.1-ին կետերի համաձայն՝ սույն պայմանագրով **Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ**՝ ծանոթանալ Դիմողների գործին, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, տեղեկություններ ձեռք բերելու նպատակով կազմել և հասցեատերերին ուղարկել գրություններ, անհրաժեշտության դեպքում Դիմողներին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումներ ներկայացնել դատարան: *Սույն փաստը հաստատվում է Դիմողների և Փաստաբանի միջև կնքված պայմանագրերի պատճեներով:*

3) 28.02.2020թ. Փաստաբանը դիմումներ է հասցեագրել ՀՀ կադաստրի կոմիտե: *Սույն փաստը հաստատվում է ստացականների պատճեներով, դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

4) 26.08.2020թ. Փաստաբանը դիմումներ է հասցեագրել ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրերի պատճեններով, դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

5) 06.07.2021թ. Փաստաբանը դիմում է հասցեագրել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրի պատճենով:*

6) 06.07.2021թ. Փաստաբանը դիմում է հասցեագրել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԲ-ին: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրի պատճենով:*

7) 22.03.2021թ. Փաստաբանը դիմում է հասցեագրել «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրի պատճենով:*

8) 12.02.2021թ. Փաստաբանը դիմում է հասցեագրել Կապանի ոստիկանության բաժին: *Սույն փաստը հաստատվում է անդորրագրի պատճենով:*

9) 08.02.2021թ. Փաստաբանը ՀՀ Սնանկության դատարան է հասցեագրել դիմում և խնդրել Հակոբ Օհանջանյանին ճանաչել սնանկ: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և ՀՀ Սնանկության դատարանի դիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշման պատճեներով:*

10) 22.02.2021թ. ՀՀ սնանկության դատարանը վճռել է՝ Հակոբ Օհանջանյանին ճանաչել սնանկ: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ Սնանկության դատարանի վճռի պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արշավիր Խալափյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ **1 անգամ** հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.08.2021թ. թիվ 179-Ա/ԿԳ-21017 որոշմամբ հարուցված կարգապահական գործի), որը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«***Փաստաբանության մասին» օրենքի*** **(այսուհետ նաև՝ Օրենք)** ***19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝*** *Փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:.*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ նյութերի ուսումնասիրությունը, վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե

- *արդյոք փաստաբան Արշավիր Խալափյանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր իր վստահորդի հանձնարարությունն պատշաճ կատարման համար.*
- *արդյոք փաստաբան Արշավիր Խալափյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել վստահորդին:*

Վերը նշված փաստերից հետևում է, որ Դիմողներին հանձնարարության պատշաճ և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու համար Փաստաբանի վարքագիծը պետք է քննարկել վստահորդի հանձնարարության և ի կատարումն դրա փաստաբանի իրականացված իրավաբանական գործողությունների համատեքստում:

Այսպես՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին Դիմողներ և Փաստաբանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման թվով՝ 2 պայմանագիր: Պայմանագրերի 1.1-ին կետերի համաձայն՝ սույն պայմանագրով **Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ**՝ ծանոթանալ Դիմողների գործին, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, տեղեկություններ ձեռք բերելու նպատակով կազմել և հասցեատերերին ուղարկել գրություններ, անհրաժեշտության դեպքում Դիմողներին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումներ ներկայացնել դատարան:

Արտադակական գործողությունների մասով Փաստաբանը ծանոթացել է գործին, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն և ներկայացրել է դիմումներ՝ ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, «Արդշինբանկ» ՓԲԸ և Կապանի ոստիկանություն:

Դատական պաշտպանության շրջանակներում ներկայացրել է դիմում ՀՀ Սնանկության դատարան և խնդրել Հակոբ Օհանջանյանին ճանաչել սնանկ, որը ՀՀ սնանկության դատարանի 22.02.2021թ. վճռով բավարարվել է և Հակոբ Օհանջանյանը ճանաչվել է սնանկ:

Տվյալ դեպքում գործում առկա ապացույցներով հիմնավորվել է, որ փաստաբանը ի կատարումն նշված հանձնարարության արտադատական և դատական կարգով պատշաճ կատարել է իր կողմից ստանձնած պարտավորությունները, որոնք ուղղված են եղել ի շահ վստահորդների:

Միաժամանակ Դիմողները պնդել են, որ իրենց սնանկ ճանաչելու մասով Փաստաբանի կատարած գործողությունները սխալ էր, քանի որ բնակարանը ձեռք էր բերվել հիպոտեկային վարկի շրջանակներում:

Դիմողների դիրքորոշման կապակցությամբ խորհուրդը գտնում է, որ 26.11.2020թ. անշարժ գույքի՝ բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ մարզ Սյունիք, համայնք Կապան ք. Հալիձոր թաղամաս 18 շենք, 8 բնակարանը 07.12.2020թ. գրանցվել է Արդշինբանկ ՓԲԸ-ի իրավունքը: Հետևաբար Դիմողների պնդումը հիմնավորված չէ և զուրկ փաստական հիմքերից:

Հարկ է նաև նշել, որ Խորհրդի նիստին դիմող՝ Աննա Արմենի Հովհաննիսյանը ընդունել է, որ ցանկացել են սնանկ ճանաչվել, որպեսզի վարկի տոկոսները սառեցվեն:

Տվյալ դեպքում, Խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողները չեն ներկայացրել որևէ հիմնավորում և ապացույց առ այն, որ Փաստաբանը չի կատարել կամ թերի է կատարել Պայմանագրերով ստանձնած պարտավորությունները՝ հաշվի առնելով այն, որ անձի (վստահորդի) համար անբարենպաստ պետական մարմնի, դատարանի կամ կազմակերպության կողմից որոշման կայացումն ինքնին չի կարող դիտարկվել որպես փաստաբանի վարքագծի կանոնների խախտում, եթե չի հիմնավորվում, որ այն կայացվել է փաստաբանի կողմից որոշակի պահանջների խախտման պատճառով:

Նշվածի կապակցությամբ նիստի ընթացքում Խորհրդի կողմից տրված հարցերի, ինչպես նաև Փաստաբանի կողմից ներկայացված կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ չնայած Դիմողների պնդմանը, Փաստաբանի կողմից այնուամենայնիվ իրականացվել են մի շարք գործողություններ, այդ թվում պայմանագրով ստանձնած պարտականություններից շրջանակից դուրս, որոնցով առնվազն հերքվել է փաստաբանի կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկատարման փաստը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արշավիր Սերժիկի Խալափյանի (արտոնագիր թիվ 731) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-21017 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

18 հունվարի 2022թ.
թիվ ԿԳ/01-Ա
ք. Երևան